ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 75-Ա

«01» նոյեմբերի 2019 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 55-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին՝

ո ր ո շ ու մ է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական սահմաններում, Ախուրյան գետի ափամերձ տարածքում «Էրստեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կառուցված փոքր հիդրոէլեկտ ակայանի գլխամասային հանգույցի կառուցվածքների պահպանման ու սպասարկման համար կառուցապատման իրավունքով հողամաս տրամադրելու մասին» թիվ 55-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող ջրային նպատակային նշանակության ջրային գործառնական նշանակության 0.110946 հեկտար հողամասը կառուցապատման իրավունքով 99 տարի ժամկետով, 50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով տրամադրել «ԷՐՍՏԵԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ այդ հողամասում ընկերության կողմից կառուցված փոքր հիդրոէլեկտրոկայանի գլխամասային հանգույցի կառուցվածքների պահպանման ու սպասարկման համար:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«01» նոյեմբերի 2019 թվական
գյուղ Ամասիա